№ 62 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 17 **1898** ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 17 № 62

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ". Կամ Tiflis, Rédaction „Mschak". Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐԿԱՅ 1898 ԹՒԱԿԱՆԻ
ՄՇԱԿ
(26-ՐԴ ՏԱՐԻ)
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԴ ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառին վճարվում է 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի շարժում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերութեան արևելեան մասնաճիւղի երկու նիստը: Գիւղական տանուտէրների ընտրութիւնը. Ռուսաց դրամատիկան ներկայացումները. Նամակ Թէօդոսիայից. Նամակ Գորուց. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլիքի աղջիկը:

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՇԱՐԺՈՒՄ

Եւրոպայում կանանց շարժումը սկսում է լայն ծաւալ ստանալ և յիշեցնում է այն շարժումը, որ տեղի ունեցաւ վերջին երեսուն տարվայ ընթացքում Ամերիկայում, ուր կանանց տոկուն և եռանդուն գործունէութեան շնորհիւ հասարակութեան բոլոր խաւերում փոխվեց աւանդական անհպաստ և վիրաւորական կարծիքը կնոջ դերի և դիրքի մասին: Այժմ, երբ Միացեալ Նահանգների և Սպանիայի մէջ պատերազմ է հրատարակվել, ամերիկական կանայք առաջին շարքի գործողների մէջն են. նրանք կազմակերպում են բազմաթիւ խմբեր և մասնաժողովներ, որպէս զի այս ու այն կերպ օգնեն իրանց հայրենիքին՝ պատւով գլուխ բերելու գաղափարի համար սկսած պատերազմը: Եւ շուտով, անկասկած, մենք հանդիսատես կը լինենք ամերիկացի կանանց մի նոր գործունէութեան և հերոսութիւնների:

Եւրոպայում կանանց շարժումը միայն այժմ է սկսվում ընդարձակ կազմակերպութիւն և լուրջ հասարակական նշանակութիւն ստանալ: Մանր մունր ընկերութիւններ և հաստատութիւններ պահանջ են զգում միմեանց հետ կապվելու և կանոնաւոր հաղորդակցութեան մէջ մտնելու, տեղի են ունենում մասնաւոր և համագումար ժողովներ, հիմնվում են կանանց շահերի պաշտպանութեան նուիրված յատուկ օրգաններ: Իսկ վերջին շաբաթները գերմանական կանայք վճռեցին գործնական դեր կատարել և ազգային պատգամաւորների ընտրութեան գործի մէջ. Բեռլինի կանանց կօմիտէտի գլխաւոր ներկայացուցիչները հրատարակեցին իրանց ընտրողական ագդը, որի մէջ յայտնում են, թէ նրանք վճռել են իրանց հայրերի, եղբայրների, ամուսինների և որդիների միջոցով պաշտպանել այն թեկնածուներին, որոնք նախ՝ իրանց ծրագրի մէջ կը մտցնեն կանանց իրաւունքների պաշտպանութիւնը, երկրորդ՝ կը խոստանան աշխատել, որ բանուոր կանանց պաշտպանող օրէնքը էապէս կուժեղացնի՝ գործարանական տեսուչներ ընտրելով և կանանցից, երրորդ՝ կը պաշտպանեն կանանց իրաւունքը՝ համալսարաններ և մասնագիտական դպրոցներ մտնելու և չորրորդ՝ կը պաշտպանեն կանանց քաղաքացիական, տղամարդու հետ հաւասար, ընտրողական և հասարակական իրաւունքները:

Լօնդօնում արդէն մի քանի տարի է, որ գոյութիւն ունի մի հիմնարկութիւն, որ յանձն է առել կենտրօնական միացնող և կապող մի մարմնի դեր կատարել Անգլիայի կանանց ընկերակցութիւնների և հաստատութիւնների համար: Այդ հիմնարկութիւնը, որ կրում է «Womens Institute» անունը, հրատարակում է մի թերթ, որի մէջ զետեղում է ամեն տեսակ տեղեկութիւններ կանանց ընկերութիւնների և կանանց պարապմունքների մասին: Այդ հիմնարկութիւնը արդէն մատուցել է մեծ ծառայութիւն կանանց գործին և օրէց օր ընդարձակում է իր գործունէութիւնը:

Իբրև նշան այն տենչանքների, որ ունի կինը իր ազատ դիրքի և նշանակութեան վերաբերմամբ, կարող ենք արձանագրել այն փաղաժամ ծրագիրը, որ կազմել են Ֆրանսիայի կանայք «անմահների» շարքը դասվելու համար: Ֆրանսուհիները որոշել են հիմնել իրանց ակադեմիան, որ պէտք է բաղկացած լինի նոյնպէս քառասուն «անմահներից» և այդպէս կազմել են առաջին ցուցակը, որի մէջ մտել են նշանաւոր կին գրողներ, գիտականներ և հրապարակախօսներ: Այդ ցուցակի մէջ են վիպագրողներ՝ Սեվերին, Արվէդ Բարին, Աննա Բովէ, Ժիպ, փիլիսոփաներ՝ Լէօնի Րուզադ, տիկին Դօդէ, թատերագրողներ՝ իշխանուհի Րայտիցի, Կլադել, Լեսիւէր, բանաստեղծներ՝ Լուիզա Միշել, Մեզիւրեր: Այդպիսի մի ակադեմիա հիմնելը դուցէ փաղաժամ է, բայց այդ միտքը յղանալը և բաւական աժող ցուցակ կազմելը արդէն նշան է, որ կինը ոչ միայն տղամարդուն հաւասար կարողանում է զանազան ձեռնարկութիւնների մէջ մասնակցել, այլ և առաջնակարգ տեղ բռնել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԵՐԿՈՒ ՆԻՍՏԸ

(Նամակ Մօսկվայից)

Ապրիլի 3-ին

Երկրորդ նիստը, ինչպէս արդէն գրել ենք, կայացաւ մարտի 5-ին: Ժողովի նախագահ պրօֆէսոր Միլլէրի բացակայութեան պատճառով նիստը բացեց փոխ-նախագահ Մ. Վ. Նիկօլսկի: Նախընթաց ժողովի արձանագրութեան ընթերցումից յետոյ, պ. Գ. Խալաթեան կարդաց իր զեկուցումը՝ «Վանի լճի շրջակայ մի քանի աշխարհագրական անունների» մասին: Զեկուցման հիմնական միտքն այն էր, թէ ինչով գէ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

Հեղինէն նկատեց այդ բանը, բայց արդէն սկսել էր, այլ ևս յետ կանգնել չէր կարելի: Ասաց, որ կուսանոցում ապրում են աշխարհից հեռացած աղջիկներ, որոնց գործը միայն աղօթք անելն է, աղաչխարելը, իրանց մեղքերի համար լաց լինելը. նրանք երբէք գործ չեն ունեցել դրսի հետ, նրանք մեռած են աշխարհային գործերի համար: Եւ սակայն կուսանոցի դռնով ներս էր մտել Քէօսա-Մուխտարը. մտել էր զօռով, ուշադրութիւն չը դարձնելով կոյսերի դիմադրութեան, աղաղակների վրա: Նա դիտեց վանքի բոլոր անկիւնները, մտաւ կոյսերի խուցերը, տեսաւ ամեն ինչ: Բայց կուսանոցը նրա տեղը չէ. ինչո՞ւ է մտել... Հեղինէն աղաչում էր, որ բէկը իր պաշտպանութեան տակ առնէ կոյսերի վանքը:

—Շա՞տ են քո աղջիկները, հարցրեց բէկը:

—Ութ հոգի:

—Ջահիլ են...

Դողդոջուն ձայնով արտասանվեցան մի քանի անորոշ, խուսափողական պատասխաններ: Բայց իզուր. բէկը թոյլ չը տուեց շեղվել, բարկացաւ: Եւ կոյսը ստիպված եղաւ խոստովանել, որ կան և ջահիլներ:

—Գեաւուրները միշտ խաբում են... Ինչո՞ւ ես լեզուդ ծամծամում... Ջահիլութիւնը դեռ բաւական չէ, դու այն ասա, գեղեցիկ են...

Նրա զզուելի ծեծաղը մայրապետի մէջ մի յամառութիւն հաստատեց, կրօնաւորի այն յամառութիւնը, որ մարտիրոսների դարում տանում էր նրան դէպի տանջանքներ և մահ: Բայց Հեղինէի յամառութիւնը միայն լռութեան մէջ էր. նա միտք չունէր խոնարհ ու ցած աղաչաւորի դերից դուրս գալ: Եւ չը վրդովվեց, երբ թուրքը նոյն լիրբ եղանակով շարունակեց.

—Բայց առանց քո ասելու էլ հասկանում եմ, որ գեղեցիկ են... Եթէ սատանայի պէս անշնորք լինէին, Մուխտարը, միամիտ մնացիր, չէր մտնի ձեզ մօտ... Նա լաւ է ճանաչում իր ապրանքը:

Անպատասխան թողնելով այդ խօսքերը, պառաւ կոյսը սկսեց խօսել երկնքի, Աստուծու մասին, մէջտեղ բերեց քրիստոնեաների սրբութիւնները, ասաց որ սուրբ վայրերում չը կան աշխարհային հասկացողութիւններ գեղեցկութեան և տգեղութեան մասին:

—Մենք աղօթքի մարդիկ ենք, բէկ... Հեռացել ենք աշխարհից, որ ամեն օր աղօթք անենք մեր թագաւորի համար. Աստուած երկարացնէ նրա կեանքը, Աստուած կարողութիւն և ույժ տայ նրա բազուկին և քաղցր սիրտ հաստատէ նրա մէջ, որ ռայեան էլ ապրէ: Դու, մեծաշուք բէկ, մեր իշխանաւորն ես, նշանակված ես Աստուծու կողմից և մենք պարտաւոր ենք հնազանդվել քեզ: Այսպէս է հրամայում մեր կրօնը: Ողորմած եղիր. եթէ մենք մեղաւոր ենք, դու ներիր մեզ... Մենք ոչինչ ենք, քո ոտի տակ հող ու մոխիր ենք...

Աղաչանքը շարունակվեց երկար. աղաչողը կարծես կուրացել էր և խլացել, ոչ տեսնում էր թուրքի արհամարհող դէմքը, ոչ լսում էր նրա բերանից թափվող հայհոյանքները: Դա հուսահատական աշխատանք էր. բառերի, հառաչանքների, արտասուքների մի ամբողջ հեղեղ, յոյսը դրած իր յորդութեան վրա, հանգիստ ու դադար չը գիտէր, աշխատելով ծածկել բոլոր խութերն ու խոռոչները, որոնք արդէն էին հանդիպանում: Հեղինէն չէր դա, խստասիրտ, պահանջող և հրամայող կոյսը, այլ մի կին, որ տանջվում էր ապառաժի մի կտոր կակղեցնելու համար...

Ապառաժը անշարժ էր ու անընկճելի: Բէկը, նայելով իր զոքանչի դէմքին, կարդաց այնտեղ ինչ որ կծու անբաւականութիւն, ինչ որ խոր վրդովմունք, որ դժուարութեամբ էր զսպվում: Կրքերը, որոնք քիչ առաջ այնքան հաճոյք էին վայելում, խօսեցին իրանց լեզուով, հասկացրին նրան, որ այդ կինն էլ դժգոհ է նրանից, որ այցելուն անվանկալ կերպով խանգարեց իրան. այդ պառաւը թոյլ չը տուեց շարունակել խօսակցութիւնը այս տան մէջ ապրող հուրիի մասին, որ այնպէս հրաշալի կերպով կարմրել գիտէ: Եւ յանկարծ, վայրենի մի բացականչութեամբ, նա պատռեց աղաչանքների հեղեղը, կանգնեցրեց նրան ու ասաց.

—Ձեր աղօթքը Ալլահը չի լսի, դուք անհաւատ չներ էք: Մուխտարը մեր մարգարէի համար հաճելի գործ է կատարում: Ինչո՞ւ ես փակել գեղեցկուհիներին. թող գնան, ծառայեն ուղղահաւատներին...

—Աղաչում եմ, բէկ, թագաւորի սէրին, հեծեծաց Հեղինէն:

—Փադիշահը... Օ՜, նրա մի օրը հազար դառնայ, նա ինքն էլ միշտ ուզում է, որ բոլոր գեաւուրները դարձի գան: Տեսնում ես այս կընոջ աղջկան. ինքը, իր կամքով, փախչում է ձեր անմաքուր հաւատից, մարգարէի աղախինն է դառնում: Այսպէ՞ս չէ...

Աննա-խաթունը շտապով հաւանութեան նշան արաւ: Իսկ Հեղինէն արտասուքներ ծլլացնելով, աղաղակեց.

—Այդ աղջկայ սէրին, էֆէնդի, քո նշանածի սէրին...:

Այստեղ կոյսը բոլորովին փչացրեց իր գործը: Նշանածի անունը վառօդի պէս պայթեց նրա մէջ, կայծեր ցայտեցնելով նրա աչքերից: Նրա դէմքը մթնեց և նա մռնչաց.

—Ի՞նչ... դու համարձակվում ես իմ կնոջ անունը խառնել քո պիղծ գործերի մէջ...

Սաստիկ բարկութիւնից նա չոքեց բարձերի վրա և գոռաց.

—Զայնդ կտրիր, շուն պառաւ... Բոլոր անհաւատներին պէտք է կոտորել: Լաւ, երախտագէտ չներին մենք պահում ենք, իսկ ձեզ պէս չներին... Ժամանակը հեռու չէ և մենք կը կոտորենք... Մուխտարին հիմա ես եմ ուղարկում քո չնանոցը. դու կը ճանաչես թէ ինչ է մուսլիմանը:

Շանթերը ճայթում էին աջ ու ձախ, բայց չէին ոչնչացնում խոնարհ աղաչաւորին: Ընդհակառակը, վերջին սարսափելի խօսքերից յետոյ նա աւելի պնդացրեց իր երեսը: Օ՜, այժմ նա բաց չի թողնի բէկի փէշը. նա արիւն-արտասունքով կը պաղատէ օր ու գիշեր, ողորմութիւն կը խնդրէ, իր դէմքը կը քսէ հողերին, քարերին...

Բայց թուրքը շատ էր տեսել այդպիսի դէմքեր: Ահա նա վեր կացաւ և բարձր ձայնով կանչեց Ահմէդին: Տանուտէրը դրսումն էր, իսկոյն բաց արաւ դուռը: Միայն այդ ժամանակ կոյսը կանգնեց, խոնարհ կերպով գլուխ տուեց բէկին ու գնաց...

Փեսայ ու զոքանչ նորից մենակ մնացին, և փեսան հանգստացրեց իրան, վերադառնալով ընդհատված խօսակցութեան: Զոքանչը բոլորովին պատրաստ էր: Պատահած դէպքի մասին նա ծպտուն չը հանեց, նրա դէմքի վրա այլ ևս դժգոհութիւն չը կար. կարծես նա շատ գոհ էր, որ կոյսի գործը այդպէս վերջացաւ, և նրա խօսքը դարձեալ քաղցր էր, դէմքը խոնարհ, ժպիտը ինքնաբաւական: Ի՞նչ գիտէր բէկը, որ նա այդ միջոցին իր ներսում խեղդում, ճնշում էր մի կրակոտ զգացմունք: Նա հեռացաւ միամիտ, չը մոռանալով սովորականի պէս յորդորել, որ շտապեն, վերջացնեն պատրաստութիւնները: Աննա-խաթունը չը կարողացաւ մենակ շունչ քաշել, գնաց Գայիանէին և փաթաթվելով նրա չլինքին, ասաց.

—Նա շուն անուանեց մեզ, ամենքիս... Եւ իրաւունք ունի. շունը մեզանից վատ չէ...

Այդպէս են եղել աղաչանքները, որոնց նա մի ժամանակ հաւատում էր... Այդ ամօթալի արտասունքը, այդ ողորմութիւնը, որ նա խնդրում էր այնքան սուր ձեռքով, անպատիւ խօսքերով,

խաւորապէս պիտի ղեկավարվենք հին աշխարհագրական անունները բևեռաձև արձանագրութիւնների մէջ յիշված աշխարհագրական անունների հետ նոյնացնելու և համեմատելու խնդրում: Դրա հետ միասին գծագրված էր ուսումնասիրութեան մեթօդը, որի մէջ և կայանում է ղեկուցման գլխաւոր արժանիքը:

Յայտնի է, որ Հին-Հայաստանի աշխարհագրական անունները շատ փոփոխութիւնների են ենթարկվել տասնեակ դարերի ընթացքում: Ահա այդ աշխարհագրական անուններից նրանք, որոնք յաւակնութիւն ունեն հնագոյնը լինելու, և որոնք ոչ մի լեզուական մեկնութեան չեն ենթարկվում ու այսպէս կամ այնպէս կարող են հաւանականօրէն կապ ունենալ բևեռաձև արձանագրութիւնների դարաշրջանի հետ, պէտք է ուսումնասիրվեն: Բայց ինչպէս իմանալ, թէ որն աւելի հին է, նախնական և ուրեմն ժամանակակից բևեռաձև գրութիւններին: Պ. Խալաթեանի կարծիքով, պէտք է այդ խնդիրը լուծելիս կանգ առնել մի որոշ դարի առաջ և նրան ընդունել իբրև սահման, օրինակ, 7-րդ դարը: Այսինքն մինչև այդ դարը յիշված աշխարհագրական անունները ընդունել իբր աւելի հնագոյն և դրանց մէջ փնտռել բևեռաձևերի մէջ յիշված աշխարհագրական անունները: Իսկ այդ դարից յետոյ յիշված կամ պատահած անունները համարել ծագումով աւելի նոր, ուստի և բևեռաձևերի հետ առնչութիւն չունեցող: Զեկուցողը VII-դ դարը վերցրեց այն պատճառով, որ ամենաքիչ ազդեցութիւնների սահմանն ընդունած լինի, այն է, ասօրական, պարթև-պարսկական, յունական և հայկական, ազգեր, որոնք, անկասկած, իրանց ազդեցութիւնը թողել են աշխահագրական հին անունների վրա: Ասօրականի մասին հրաժարվելով բան ասել (մասնագիտութիւնից դուրս էր), անցաւ յունականին և հայկականին: Մի շարք անունների վկայութեամբ—Հերոդոտից, Ստրաբոնից, Պլինիոսից, Պտղոմէոսից և այլն—ցոյց տուեց, որ հայ հեղինակները բաւականաչափ հարազատութեամբ են պահել հին աշխարհագրական անունները: Ինչ կասկած, որ օտար հեղինակների յիշած անունները տարբերվում են հայերէնից իրանց սուֆֆիկսներով: Այսպէս, օրինակ, Կարինիդիս—Կարին (Էրզրում). Թոսպիդիս—Տոսպ. Աստիանէնէ—Հաշտեանք և այլն: Հայկական ազդեցութեան հետքը շօշափեց՝ հին աշխարհագրական յատուկ և այլ անունների վերջաւորութիւնները մէջ բերելով, ինչպէս են՝ ան, եան, եք, ցիք, իկ, բան, ոտն, ովիտ, հովիտ, ձոր և փոր վերջաւորութիւններով բարդված մի շարք անուններ: Հին Հայաստանի աշխարհագրական անունների վրա պարսկական ազդեցութիւնը (Բագավան, Արտաշատ, Բակուրակերտ, Ռոստան և այլն) շեշտելուց յետոյ արաւ հետեւեալ եզրակացութիւնը: Այսպէս ուրեմն, աշխարհագրական անունները բաժանելով զանազան խըմբերի, ուշադրութիւն դարձնելով նրանց նշանակութեան և սուֆֆիկսներին, պէտք է դասաւորել տարբեր դարաշրջանների, մի հանգամանք, որով պատրաստված կը լինի այդ անունները բևեռաձև արձանագրութիւնների անունների հետ համեմատելու և նմանեցնելու ապահով նիւթը:

Ապա ղեկուցանողը անցաւ Վանի լճի շրջակայքի անուններին: Նա մի առ մի թուեց Վանի ծովանունները—Բզնունեաց, Ռշտունեաց, Վասպուրականի, Ալթամարի, Արճէշի, Վանայ և Տոսպեան ծով, ասեց, որ հայոց մատենագրութեան մէջ այդ ծովի մասին յիշատակութիւնը—V դարից դէնը չէ անցնում, որովհետև գրաւոր յիշատակարաններ այդ դարից այն կողմը չեն անցնում: Գալով նրա շրջակայքի աշխարհագրական հին տեղերին, նա առանձնապէս կանգ առաւ Արճէշ, Արծկէ, Մանազկերտ, Խլաթ քաղաքների վրա, որոնց մասին՝ պատմական տեղեկութիւնների հետ՝ տուեց նաև համառօտ նըկարագիրը: Վերջը պ. Խալաթեան առաջարկեց կազմել բոլոր հին աշխարհագրական անունների այբբենական ցուցակը, տեղեկութիւններով հանդերձ: Այդ գործը յանձն առաւ Մ. Վ. Նիկօլսկի իբր բևեռաձևեր ուսումնասիրող:

Վիճաբանութիւնների վերջանալուց յետոյ, Ա. Վ. Դլտճեան կարդաց իր ղեկուցումը՝ «Աստուհինի հին քաղաքը»: Նկարագրելով Շիրակի Աստախանս (հայկական Աստեղանի) գիւղը՝ իր շրջակայքով, նրան նմանեցրեց Սարիդուրիշի արձանագրութեան Աստուխինի քաղաքի անուան հետ: Ապա ցոյց տալով այն կապը, որ դա կարող էր ունենալ Դուլիճանի և Դանլիճայի հետ, ուր կան բևեռաձև արձանագրութիւններ, և այն նշանակութիւնը, որ ունեցել է Աստախանայի շրջակայքը և գլխաւորապէս Ղարս-չայի (Ախուրեանի) միջին և ստորին հոսանքը Արգիստիի նուաճումների ժամանակ, ղեկուցանողը այդ տեղերի մանրամասն ուսումնասիրութիւնը համարեց անհրաժեշտ: Պ. Նիկօլսկի նկատեց, որ այդ ուսումնասիրութիւնը մասամբ կատարվել է և շուտով կը հրատարակվի: Դրանով էլ վերջացաւ նիստը:

Ս.

ԳԻՒՂԱԿԱՆ ՏԱՆՈՒՏԷՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(Նամակ գիւղից)

—

Բանանց, ապրիլի 11-ին

Ապրիլի 8-ին կայացաւ Բանանց գիւղի տանուտէրի ընտրութիւն, որը գիւղական հասարակական կեանքի ամենանշանաւոր մօմէնտներից մէկը պէտք է համարել: Տանուտէրը գիւղում ամենաազդեցիկ մարդն է. Նա է ղեկավարում հասարակական գործերը, նա է կեանքին տօն տըւողը, նա միտական պատճառ է ամենայն չարի ու բարիի: Գիւղի ներքին կեանքում նա մի ինքնիշխան պետ է, որի կամքը յաճախ օրէնքի ույժ ունի խաւարի ճանկերում հեծող գիւղական մասսայի համար: Տանուտէրը ունի իր շտաբը, որը կազմված է լինում գիւղի հասարակական գործիչներից, պաշօտնիկներից ու աղսախկալներից: Այդ շտաբը նրա իշխանութեան ամենայուսալի յենակէտն է, ուստի իւրաքանչիւր տանուտէր աշխատում է, որ իր գոյութեան այդ օրգանը կազմված լինի հաւատարիմ մարդկանցից: Այդ պատճառով տանուտէրը իրան պարտաւորված է համարում գլխաւոր շտաբի անդամների «ըռեխները միշտ եղըր-մեղըր քսել»: Այդ անմահական «ըռեխները» յաճախ շատ են «եղըր-մեղըր» կլանում, որի ծանրութիւնը ամբողջապէս ընկնում է ստորադրեալ մասսայի վրա: Եթէ նրա շրջանից «ձէն-ծպտուն» հանող է լինում, այդպիսի յանդուգն արարածի կարկաժին խեղճն տրաքում է գլիրի ղազանակը, ուստի բողոքները շատ հազուագիւտ են լինում: Շատ սակաւ է պատահում այնպիսի տանուտէր, որը փոքր ի շատէ ցաւի իր ժողովրդի համար ու լոկ միայն նրան ծառայելու փափագով ստանձնած լինի իր պաշտօնը: Մեծամասնութիւնը մի նպատակ ունի միայն՝ իր տանուտէրութեան ընթացքում հնարաւորութեան չափ լցնել իր գրպանները առանց միջոցների խտրութեան:

Ընտրութիւններից մի երկու ամիս առաջ սկսվում է ընտրողական պայքարը, ագիտացիան: Գիւղի ղեկավարները ասպարէզ են դուրս բերում զանազան թեկնածուներ: Վերջինները սկսում են իրանց գործը. շատ «ըռեխներ են եղըր-մեղըր» քսում ու շատ թասեր դատարկել տալիս: Տեղի են ունենում նախապատրաստական ժողովներ. խօսում են թեկնածուների մասին. իւրաքանչիւրը իր մարդուն է պաշտպանում: Սովորական բան է այդ ժողովներում լսել մի որ և է ազդեցիկ ղեկավարի, կապ բռնողի, բերանից այսպիսի խօսքեր՝ «Ա խալխը, էդ ա լոխդ էլ մի բերան չորս մարդու անուն էք տալիս. չորսն էլ կարգին մարդիկ են. այժմս դրանցից ով գինու տուճը կամ բօչկէն բաց անի, տանուտէրը նա ա»:—«Ա գլխամեռ, ես արդէն երկու տուճ եմ բացել. էդ քեզ բաւական չի. նորն ես ուզում դատարկել»,—նկատում է թեկնածուներից մինը կապ բռնողին:—«Ի հարկէ բաւական չի. երկու տճով ուզում ես տանուտէր դառնալ. դա տեսնված բան ա, պատասխանում է կապ բռնողը, տանուտէրացուն քիչը պէտք ա մի վեց տուճ էլ ա դատարկել տալ խալխին»: Վերջապէս կայանում է ընտրութիւնը. յաճախ ընտրվում է նա, ով որ ամենից շատ է տճեր դատարկել տուել «խալխին». միւս արժանաւորութիւնները երրորդական բաներ են համարւում:

Բանանց գիւղում այս անգամ կատարված ընտրութիւնները իրանց ձևով և կարգապահութեամբ օրինակելի կարելի է համարել. առաջին անգամ տանուտէր ընտրվեց գաղտնի քուէարկութեամբ, որպիսի բան երբէք չէ պատահած գիւղում: Իւրաքանչիւր գիւղացի հնարաւորութիւն ունեցաւ իր ցանկացածին քուէ տալ: Տունձն ու աւանդական մի թաս արաղը այդ ընտրութիւնների ժամանակ զրկվեցին այն նշանաւոր դերից, որը երկար տարիներ նրանք խաղում էին: Տճեր դատարկվելու դէպքեր պատահել են ընտրութիւնների նախապատրաստական շրջանում: Գաղտնի քուէարկութեան հսկում էին Գանձակի գաւառի երկրորդ մասի պրիստաւ Վօրօբեօվը և հասարակութեան կողմից ընտրված տեղացի մի ինտելիգենտ անձը: Նրանք իւրաքանչիւր ընտրողին բացատրում էին նրա իրաւունքները, առաջարկում էին քուէ տալ ում որ նա ցանկանում է, ով որ նրա կարծիքով արժանաւորն է տանուտէրի պաշտօնի համար: Պատահում էին դէպքեր, երբ գիւղացին չը գիտէր ում ձայն տալ, մնում էր շուարված կանգնած պրիստաւի առաջ. նրան առաջարկում էին գնալ, դրսում մի լաւ մտածել և նորից մտնել ընտրութեան սենեակը: Ընտրութիւններից առաջ և յետոյ պրիստաւ Վօրօբեօվը դիմեց ժողովրդին մի շարք խելացի խորհուրդներով ու խրատներով: Պարոնը լաւ տպաւորութիւն էր թողնում շրջապատողների վրա. տեղացիներից մինը թարգմանում էր նրա ճառերը ժողովրդին: Սա կարող է համարվել առաջին բարեկիրթ ինտելիգենտ պրիստաւը, որը մուտք է գործում հայ գիւղը Գանձակի գաւառում:

Ս. Տէր-Աւետիքեանց

ՌՈՒՍԱՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Չորեքշաբթի, ապրիլի 15-ին, Կոլշի խումբը ներկայացրեց «Խանդոտ կին» (Jalouse) ֆրանսիական կօմէդիան, որ առաջին անգամ խաղացվել է Պարիզի Վօդըվիլ թատրոնի բեմի վրա 1897 թ. հոկտեմբերի 4-ին: Երեք գործողութիւնից բաղկացած այդ կօմէդիան, ֆրանսիական թեթև կօմէդիաների նման, զուրկ լինելով որ և է էական մտքից, նպատակ ունի միայն զուարճացնել հասարակութիւնը և առիթ տալ նրան կուշտ ծիծաղել: Դերակատարների մէջ իրանց գեղեցիկ խաղով այս անգամ աչքի էին ընկնում

կրակ էին տուել Աննա-խաթունին: Եւ նա կը ճաքվէր, եթէ բէկը գիջանէր, խղճար: Բայց նա այդ չարաւ, նա չափազանց շատ է արհամարհում շներին, որ ուշադրութիւն էլ դարձնէ նըրանց խնդրուածքների վրա: Ի՞նչպէս նա հովացրեց Աննա-խաթունի սիրտը... Այո, այդպէս էլ պէտք է վարվել շների հետ: Նա ինքն էլ մի շուն է և ուրախ է տեսնելով, որ իրանից զզվում է այն մարդը, որ իր աղջկան անուանեց իր կինը:

—Ես տեսայ թէ ինչ է աղաչանքը և այսուհետև ինձանից չը վախենաս, Գայիանէ... Գիշերները չեմ քնի, կը սովորեմ ոչ միայն խաբելը, այլ և ուրիշ շատ բաներ... Սուտ է, չը կայ աղաչանք, չը կայ արտասունք, որ շարժեն նրան: Շներ ենք մենք և նա գիտէ, որ մեզ պէտք է կոտորել...

—Հիմա որ Մէլիք-Յուսէինի կինն ես, բացականչեց աղջիկը և անզուսպ հրճուանքով սեղմեց մօրը իր կրծքին:—Ես ասում էի, որ դու այնպէս չես մնայ...

—Դու շատ տանջվեցար, Գայիանէ, իմ սիրուն երեխայ... Դու սուրբ էիր, դու հասկանում էիր...

Երեկոյեան Թէոսը մի թուղթ բերեց և ասաց, որ կոյս Հեղինէն է ուղարկել մի երեխայի ձեռքով: Գայիանէն կարդաց.

«Քրիստոսի հարսներին անպատւելուց յետոյ դու էլ, քո տունն էլ, քո ամբողջ երկիրն էլ անիծված կը մնաք... Այժմ ես փակված եմ, պահպանում եմ Տիրամօր օթեանը: Բայց էգուց դուրս կը գամ: Աղաչանքը, ճշմարիտ է, եղաւ, բայց քիչ էր, այդ պատճառով էլ չօգնեց: Էգուց դու էլ կաղաչես ինձ հետ, կընկնես նրա ոտները, ողորմութիւն կը խնդրես:»

—Ե՞ս, աղաղակեց Աննա-խաթունը և ձեռքերի շարժմամբ հեռու մղեց իրանից այդպիսի միտքը:—Նա ուզում է ինձ էլ խայտառակել, զզուելի դարձնել: Ես չեմ անի... Այդպէս էլ գրիր, Գայիանէ:

—Ո՛չ, ես չեմ գրի, պատասխանեց նա ծիծաղելով:—Պէտք է խղճալ նրան... Կոյսերին ես կը թագցնեմ...

—Ո՞րտեղ...

—Գետնի տակ, գաղտնի սենեակում, որի մուտքը միայն քեզ է յայտնի:

—Սենեակը, բացականչեց մայրը, սաստիկ զարմանքից կծելով իր մատը:

Նոր յիշեց նա, որ գոյութիւն ունի այդ զարմանալի գաղտնարանը: Ի՞նչպէս նա մինչև այժմ մոռացել էր, որ սև օրվայ համար մէլիքի տունը ունի թագնվելու տեղ: Գայիանէի արած գիւտը յափշտակեց նրան: Այս վտանգաւոր հանգամանքների մէջ երեւան էր գալիս մի նոր և վերին աստիճանի յուսալի դաշնակից. եթէ գործը չաջողվի, եթէ հայերը կոտորելու փոխարէն սկսեն կոտորվել, այդ գետնափոր անցքը կը կլանէ մէլիքի ժառանգներին, կը փախցնէ նրանց: Եւ նա հաւանութիւն չը տուեց Գայիանէին:

—Այդ տեղը շինված է միայն մեզ համար, ասաց նա:—Հայրդ նախ քան մուտքի տեղը ցոյց տալը երկար խրատեց չը մոռանալ, որ միայն մենք ենք կարող պատսպարվել այնտեղ. իսկ դրսի մարդը երբէք չը պիտի իմանայ թէ ինչ կայ մեր տան տակ:

—Այդ բոլորը ինձ պատմեց Մէհրին, երդվեցնելով, որ ոչ ոքին չասեմ: Եւ ես չեմ ասել: Բայց այժմ մեր ինչին է այդ գաղտնի ներքնատունը...

Աննա-խաթունը քիչ էլ մտածեց, աչքը չը հեռացնելով իր աղջկանից, որ բացատրում էր թէ փախուստի ճանապարհ չը կայ իրանց համար, թէ ծածկվելու, պատսպարվելու միտքը բոլորովին չը պիտի լինի, որովհետև նա կարող է թուլացնել, երկիւղ պատճառել վճռական ժամին: Եւ մայրը, վերջապէս, մի հանգիստ ձայնով պատասխանեց.

—Դու ճիշդ ես ասում: Ներքնատունը մեզ հարկաւոր չէ: Մենք կը մնանք դրսում...

Ուրիշ կերպ, այո, չէր կարող լինել: Գիշերը Մէլիք-Աւանը իր անակնկալ այցելութիւններից մէկն արաւ, հաշիւ պահանջելու համար: Այդպէս նա արել էր շատ անգամ: Եւ այդ այցելութիւնների տեղը միայն Աւետարանոցը չէր. Նա հասնում էր ամեն տեղ, տեսնվում էր հարկաւոր մարդկանց հետ: Ցերեկը նա չէր երեւում. իսկ գիշերները նրա ձին թռչում էր այս ու այն կողմ, և նրա լուռ ուղեկիցներն էին Հայրապետը և մի ուրիշ հաւատարիմ ծառայ: Յանկարծ նա երեւում էր մի գիւղում և կարճ միջոցից յետոյ էլի աներեւութանում էր:

Այս անգամ սովորականից քիչ երկար մնաց նա իր քրոջ տանը: Այս անգամ նա կարող էր հաստատապէս ասել, որ իր աշխատանքը զուր չը կորաւ. ամեն տեղ պատրաստ էին, գործը զարմանալի աջողութեամբ էր առաջ գնում: Հասկանում են ամենքը, որ վճռվում է մահվան և կեանքի հարցը: Խաչէնի մէլիքը մի օրվայ մէջ հաշտվեց իր եղբօր հետ: Այն, ինչ որ չը կարողացաւ անել կաթողիկոսը, գլուխ բերեց հայրենիքի վրա կախ ընկած վտանգը: Այդպիսի ժամանակ չը պիտի լինի մի տուն, ուր երկու մարդ միմեանց խէթ աչքով նայեն: Եւ իրաւ, ամեն տեղ հաստատվել է սերտ եղբայրութիւնը. թշնամիները հաշտվում են, խօսք տալով միմեանց՝ վէճ չը բարձրացնել մինչև գարուն: Երկիրը լուռ է, հանդարտ. դրսից նա մի խաղաղ, հնազանդ աշխարհ է, բայց այդ հանդարտութեան տակ տեղի ունի մի խուլ, աննկատելի շարժում: Զարմանալի է, որ այսպիսի հանգամանքներում չէ յայտնվում և մի հատ դաւաճան...

—Բայց կարո՞ղ է յայտնվել, հարցրեց Աննա-խաթունը:

—Շատ հեշտութեամբ... Մի հատ մարդը այժմ կարող է կործանել մի ահագին երկիր, Աբաքսից սկսած մինչև Գանձակ...

Ուրեմն պէտք է շտապել:

—Այդ մենք գիտենք...

Նա պատմեց, որ ահը այնքան մեծ չէ: Գիւլիստանի, Ջրաբերդի և Խաչէնի կողմից կարելի է բոլորովին ապահով լինել. այդ տեղերում գործում է Ջրաբերդի Մէլիք Հաթամը: Առանց այդ մարդու օգնութեան հազիւ թէ կարելի լինէր գլուխ բերել մի այսպիսի ահագին գործ: Նա կայծակի պէս հասնում է ամեն տեղ և նրա կարգադրութիւնները միանգամայն զարմանալի են: Նա աչ ու գողի մէջ է պահում փոքր ի շատէ կասկածելի մարդկանց: Նա այնպէս է արել, որ մարդիկ հսկում են միմեանց. ամեն մէկը, որ քիչ բարձր կը խօսէ, յիմար սպառնալիքներ կը կարդայ և փոքր ինչ ծուռ քայլեր կանի, անմիջապէս կը սպանվի: Բայց փառք Աստուծու, մինչև այժմ այդպիսի դէպք տեղի չէ ունեցել: Ժողովուրդը լաւ է հասկանում, որ գործը ամբողջապէս իրան է պատկանում: Վերջին նախրարածն էլ մասնակցութիւն ունի: Ամեն մի այրի կին, ամեն մի չափահաս երեխայ սովորել է, որ պէտք է զգոյշ լինել և սպասել...

—Աջողութիւնը այժմ անկասկած է, բացականչեց Գայիանէն:

—Այո... Միակ վախը դարձեալ Վարանդան է: Այստեղ օսմանցիները շատ են ուժեղ:

Այդ վախի դէմ իր հոգու ամբողջ կարողութեամբ բողոքեց Աննա-խաթունը, նորից պատմելով այդ օրվայ անցքերը: Օսմանցիները—ով է ուրանում—շատ են ուժեղ. բայց մի՞թէ պակաս տեղ են թողել այստեղ գործողները: Նա երդվեց, որ ինքը դեռ չի թուլանայ, որ դեռ այժմ ունի դիմանալու, եթէ նոյն իսկ ամիսներ հարկաւոր լինեն:

Մէլիքը արժանացրեց նրան իր հաւանութեան, որ արտայայտվեց գլխի թեթև շարժումով: Նա այլ ևս չուզեց թագցնել, որ ամիսների բան չէ դա, այլ մի քանի հատ օրերի: Մայր ու աղջիկ մի սրբազան երկիւղով, մի մեղմ ու ցուրտ դողով լսեցին նրանից, որ նշանակված է արիւնահեղ գործի ժամանակը... Մի գիշեր, որ կը գայ այս քանի օրերը... Բայց մինչև այդ պէտք էր մի գործ էլ աջողեցնել: Մէլիքը մանրամասն բացատրեց իր միտքը, հրահանգներ տուեց: Աննա-խաթունը չը վախեց այդ նոր գործի դժուարութիւնից. ընդհակառակը, հաստատ խօսք տուեց և վստահութիւն ազդող ժպիտներով ճանապարհ դրեց եղբօրը, որ յայտնեց թէ կը վերադառնայ չորս օրից յետոյ:

(Կը շարունակվի)

տիկին Կոչէվա, որ խաղում էր խանդոտ կնոջ՝ Ժերմէն Մորէյլի դերը և տիկին Բոմանովսկայա—Օլիմպիային, Ժերմէնի մօր դերում: Ռուսերէն թարգմանութիւնը, որ կատարել է ինքն Կոչէվը, աւելի աջողված կը լինէր, եթէ թարգմանիչը տեղ-տեղ բուն ռուսաց ժողովրդական ոճեր չը գործածէր, որոնք այնքան էլ սաղ չեն գալիս Պարիզի արիստոկրատական սալօններին: Բացի այդ կոմէդիայից խումբը ներկայացրեց նաև «Роковой дебютъ» վերնագրով կատակը մի գործողութեամբ, որ շատ գեղեցիկ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա: Այդ կատակի մէջ դուրս է բերված ժամանակակից գիմնազիական կրթութեան վնասակար կողմը—խառնիխուռն, անսիստեմատիկական մտաւոր զարգացման անգին պաշարը ի վնաս բարոյական կրթութեան: Դեկադէնդ գիմնազիստի դերը մեծ աջողութեամբ կատարեց Մոսկվին:

Ա.

ՆԱՄԱԿ ԹԷՕԴՕՍԻԱՅԻՑ

—

Ապրիլի 10-ին

Մարտ ամսի վերջերը, Խորէն եպիսկոպոս Ստեփանէ, տկարութեան պատճառով լինելով Թէոդոսիայում, արդէն պատրաստվում էր գնալ ս. Խաչ վանք, երբ Թէոդոսիա բնակվող մի քանի պատուաւոր հայեր խնդրեցին, որ Զատիկը Թէոդոսիայում անցկացնէ և տօն օրերին եկեղեցում քարոզէ: Սրբազանը ժողովրդի խնդիրը չը մերժեց և մնաց: Աւագ հինգշաբթի օրը, պատարագից յետոյ, հանդուցեալ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանի համար հոգեհանդիստ կատարեց, և դամբանական խօսեց: Լսողները շատ երկար պիտի յիշեն՝ տխուր մտածմունքի նիւթ տուող նրա խօսքերը: Ո՞ր ներկայ գտնվողը կը մոռանայ ի միջի այլոց այս խօսքերը, «Հայոց ժողովրդին կարծես թէ հալածում է ճակատագիրը, որ նոյն ժողովրդի մէջ ուսումնական, բարեսէր, անձնուէր հոգևորականը չէ կարողանում ամենևին ասպարէզ ունենալ և օգտաւէտ լինել իր եկեղեցուն և ազգին: Եւ ահա երբ տգիտութիւնը և շահասիրութիւնը ամեն կողմից պաշարել են հայոց ժողովուրդը, Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանի պէս պատուական և անշահասէր եպիսկոպոսը մեռնում է միայնութեան մէջ, գրեթէ մի անապատական վանքի խցի մէջ: Եւ նրա վիճակակիցները մեռած պիտի համարվեն, մի հեռաւոր, կորած վանքում անգործութեան մէջ մաչվելով: Անբաղդ, խեղճ հայոց ազգ...» Աւագ շաբաթի օրն էլ հոգերուխ քարոզներով մխիթարեց ժողովուրդը. մի և նոյն ժամանակ երկու մխիթարական գործ կատարվեց Խորէն եպիսկոպոսի առաջարկութեամբ: Նախ Թէոդոսիայում հայոց եկեղեցական աղքատաց հոգաբարձութիւն կազմելու խնդիրը որոշվեց, և յետոյ՝ չունևոր գաղթականների համար Զատկի շաբաթ երեկոյեան և կիրակի կէս օրին ճաշ պատրաստելու համար բաւական գումար ժողովվեց, և ճաշ պատրաստվեց:

Ս. Գ.

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Ապրիլի 2-ին

Գօրուց 2—3 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Բերբուկ անունով գիւղը, ուր ապրում են 12—15 տուն հայեր: Սրանից 15—20 տարի առաջ միտք է յղացել այդ գիւղում մի փոքրիկ եկեղեցի շինել տեղական հայերի համար: Այդ նպատակով Գօրու քահանաներից մէկը, ամբողջ 10—15 տարի շարունակ այս ու այն կողմ շրջելով՝ ժողովարարութիւն է արել և սկսել եկեղեցու շինութիւնը, որ սակայն դարձեալ չէ աւարտվել: Թէ որքան փող է հաւաքվել այդքան տարիների ընթացքում, որքան է ծախսվել շինութեան վրա, այդ և այլ հարցերը թողնենք մի կողմ մնայ, քանի որ դրանք կապված են մի անձի հետ, որ այժմ կենդանի չէ: Եկեղեցու շինութիւնը աւարտելու համար երեք ամիս սրանից առաջ այստեղից գնաց Բագու Գ. քահանայ Մեհրաբեանցը ժողովարարութիւն անելու: Վերադառնալուց յետոյ՝ ժողովրդի մէջ սկսեցին զանազան երկդիմի լուրեր պտտել, որ ոչ մի տեսակէտից քահանային պատիւ բերել չեն կարող: Ոմանք ասում են, որ նրա հաւաքած գումարը 300 ռուբլուց աւելի չէ. ոմանք էլ պնդում են, որ 700 ռուբլուց աւելի է, և այս նկատողութիւններին հետևում են սովորական սրախօսութիւններ: Մի բոպէ միամիտ ձևանալով՝ ենթադրում ենք, որ այդ լուրերը ուղիղ հոր ականջին չեն հասել և դրա համար էլ նա չէ շտապել հերքելու իր մասին տարածված անհեթեթ լուրերը: Նա այստեղ վայելում է «զուսաւորված» քահանայի համբաւ. կարծում ենք, որ նա ոչինչ անյարմարութիւն չի տեսնի մեր առաջարկութեան մէջ.—հասարակութիւնից հաւաքած փողերի մասին իրան հասարակութեան էլ հաշիւ տալ մամուլի միջոցով: Մանաւանդ որ դրանով նա թէ չար լեզուներին կը ստիպէ լռելու և թէ Բագուի նուիրատուներին միջոց կը տայ իմանալու, թէ ուր գնացին իրանց տուած նուէրները: Վնաս չի լինի տէր հօր համար՝ եթէ նա շտապի օր առաջ հերքել հասարակութեան մէջ պտտվող անհեթեթ լուրերը:

Գ-ցի

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Մարտի 28-ին

Կան երկիրներ, ուր ծաղկի պատուաստելը պարտաւորեցուցիչ է բոլորի համար էլ: Իսկ մեր գիւղական ժողովուրդը մի որոշ դաղափար անգամ չունի ծաղկի կամ այլ տարափոխիկ հիւանդութիւնների մասին. ժողովրդական լեզուով պարզ ու դիւրըմբռնելի բժշկական գրքոյկներ ու բրոշիւրներ, գրված գիւղական դասակարգի համար, գոյութիւն չունեն: Գիւղերում գրագէտների թիւը շատ չնչին տոկոս է կազմում, իսկ գիւղական ինտելիգենցիայի ծուլութեան շնորհիւ ընթերցանութեան սէրը տարածված չէ մեզանում, մինչդեռ արբեցողութիւն, թղթախաղ օրէցօր մուտք են գործում: Կան գիւղեր, ուր այս կամ այն տարափոխիկ հիւանդութիւնները հաճաճարակի ձև են ընդունում, անթիւ զոհեր են տանում: Պատճառներից մէկն այն է, որ գիւղացիները ծածկում են այդ ցաւերը: Ուստի անհրաժեշտ է պարտաւորեցնել գիւղի մէլիքին, ռանուտէրին, որ այսպիսի հիւանդութիւններ երևան գալուն պէս տեղեկացնեն ուր հարկն է: Պէտք է խիստ պահանջել, թէ չէ մեր դեկավարները Աստուծից իբրև պատիժ ուղարկված են համարում վարակիչ հիւանդութիւնները՝ և չեն էլ հաւատում բժշկականութեան:

Այժմ Հին-Նախիջևանում տարածված է քութէշ տարափոխիկ հիւանդութիւնը, որը զգալի թիւով զոհեր է տանում: Թմբուլ գիւղում տարածված է մի ինչ որ հիւանդութիւն, որը և կարմրուկի (корь) և քութէշի նշաններ է արտայայտում. այդ հիւանդութիւնը տևում է ամիսներ, վարակվածին ուժասպառ է անում, վիզը ու կոկորդը ուռչում է, մինչև որ ականջից ժայր է հոսում, այնուհետև աստիճանաբար հիւանդի առողջութիւնը վերականգնվում է: Եամխանա, Աստապատ և Կարմիր-Վանք գիւղերում տարածված է բնական ծաղիկ հիւանդութիւնը: Առաջ ենք բերում մի դէպք, որ տեղի ունեցաւ մարտի 24-ին Եամխանա հայաբնակ գիւղում և որ պարզ կերպով հաստատում է, թէ ժողովուրդը զարգացման որպիսի ստոր աստիճանի վրա է գտնվում: Գաւառական բժիշկ Բագրիձէ ուղարկում է ֆէլդշեր Ա. Մէլիք-Գիւլնազարեանցին Եամխանա, Աստապատ և Կարմիր-Վանք գիւղերը, այնտեղ տարածված հիւանդութիւնների դէմ նախապաշտպանողական միջոցներ ձեռք առնելու նպատակով: Շատ տեղ գիւղացիները մերժում են հիւանդներին ցոյց տալ: Իսկ Եամխանա գիւղի երկդասեան դպրոցում, տեսչի խնդիրքով և գաւառական բժշկի համաձայնութեամբ, ֆէլդշերը պատուաստում է ծաղիկը մօտ 50 աշակերտներին: Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվում է գիւղում. աշակերտների մայրերը խմբերով արշաւում են ուսումնարան անէծքի ու յիշոցների կարկուտ թափելով իրանց զաւակներին «թարալամիշ» (վիրաւորող) անող ֆէլդշերի գլխին: Կուի ասպարէզը ուսումնարանից տեղափոխվում է գիւղի մէջ, որտեղ անբաւականութիւնը աճելով, սուր կերպարանք է ստանում: Ֆէլդշեր Գիւլնազարեանց հեռանում է գիւղից և միայն այդպէս կարողանում է ազատվել գիւղացիների ծեծից:

Ա. Տէր-Ստեփանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, ապրիլի 15-ին

Խնդրում եմ թոյլ տաք «Մշակի» միջոցով յայտնել խորին շնորհակալութիւն հանդուցեալ Յովհաննէս Ստեփանեանի մօր, կնոջ, եղբայրների, քեռու ընտանիքի և իմ կողմից մեր այն բոլոր բարեկամներին ու ծանօթներին և հանդուցեալի ընկերներին, որոնք պատուել են նրա յիշատակը իրանց ներկայութեամբ թաղման ու քառասունքին, և կամ հեռագիրներով ու նամակներով իրանց ցաւակցութիւնն են յայտնել: Սրա հետ խնդրեմ բարեհաճէք ընդունել 100 ռուբլի իմ, իմ եղբայրների և քեռուս ընտանիքի կողմից՝ պսակների վրա ծախսելու փոխարէն՝ որից 50 ռուբլին յատկացրէք ձրի ճաշարանին, իսկ 50 ռուբլին Խարկովի հայ ուսանողութեան, ուսման վարձ տալու:

Գրիգոր Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են Մոսկվայից, որ հանդուցեալ Գէորգ Քահանեանցի թողած կարողութիւնը 47,000 ռուբլի մի գումար է կազմում, որ պիտի գործադրվի բարեգործական նպատակով: Հանգուցեալի այրին, տ. Վառվառէ Քահանեան, որ նշանակված է կտակատար, դեռ չէ որոշել թէ ինչ գործի պիտի յատկացնել այդ գումարը:

—

Կենդանիների ժանտախտի դէմ մաքառելու համար հրաւիրված ժողովը քննեց արդէն երեք հարց և եկաւ այն եզրակացութեան, որ ժանտախտով հիւանդացած անասունը խսկոյն պէտք է մորթվի և նրա տէրը պէտք է ստանայ յայտնի գնահատութեամբ վարձատրութիւն. այդ միջոցը պէտք է գործադրել ամբողջ Անդրկովկասում՝ հասցնելով պաշտպանողական հսկողական շրջան մինչև Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանները: Ժողովի նիստերը բազմամարդ են և մասնակցողները փորձված և գործին տեղեակ են: Այսօր, ուրբաթ, պէտք է քննվեն կենդանիների գնահատութեան և կենդանիների տեղափոխութեան ժամանակ կարևոր հսկողութիւն նշանակելու հարցերը:

—

Զմիւռնիայից Կ. Պոլսի «Մասիս» լրագրին հաղորդում են, որ նորերս այնտեղ ներկայացրին Գ. Սունդուկեանցի «Խաթաբալա» կոմեդիան: Այդ առիթով թղթակիցը, ի միջի այլոց, ասում է. «Բաղմութիւնը խուռն էր Հռիփսիմեանի սրահին մէջ: Ասիկա ապացոյց մըն էր նախ թէ ժողովուրդը համակրութեամբ կը վերաբերվի Աղքատախնամի և Ընթերցասէր միացած ընկերութիւններուն նկատմամբ ու երկրորդ թէ անիկա կարօտով կը սիրէ իր թատրոնը: Տարի ամբողջ ամեն կողմերէ կը թափին Իզմիր իտալական, ֆրանսիական, յունական օպերայի, օպերէթի խումբեր ու հայերը խուռն բազմութեամբ կը դիմեն ամենուն: Տարի մը առաջ պ. Լալաեանցի նախաձեռնութեամբ՝ ամաթէօռներու ընտրված խումբ մը «Համլէթը» ներկայացուց: Աքանչելի աջողութիւն մը ունեցաւ այն ներկայացումը. կը ցաւինք միայն, որ այդ աղուոր առաջինը՝ վերջինն ալ եղաւ....: «Խաթաբալայ»-ին մէջ դերակատարները ցուցուցին թէ կարող են աւելի ընտիր ու բարձր խաղեր ալ ներկայացնել: Կէս դար առաջ Իզմիր Վասպուրական անուն ընկերութիւն մը կար, յատկապէս թատրոնը քաջալերելու համար հաստատված: Արդ, ինչու համար այսօրվայ ընտիր ու զարգացած երիտասարդութիւնը փորձ մը չընէ թատրոնը վերականգնելու: Վստահ ենք թէ պիտի յաջողին, ու մենք առաջինը պիտի ըլլանք, որ ծափահարենք իրանց այդ բարձր ձեռնարկը:»

—

Երկրագործութեան մինիստրը հեռագրով առաջարկել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան նշանակել մի ներկայացուցիչ, որ ուղևորվի Պետերբուրգ՝ ներկայ լինելու և մասնակցելու այն խորհրդակցութեան, որ պէտք է տեղի ունենայ ֆինանսների մինիստրութեան մէջ ծխախոտագործութեան պայմանները բարւոքելու մասին: Խորհրդակցութիւնը պէտք է սկսվի ապրիլի 28-ին: Ցանկալի է, որ ընկերութիւնը կարողանար իր անդամներից մէկին ուղարկել իբրև ներկայացուցիչ. սակայն դուցէ այդ չաջողվի, որովհետև մինիստրութիւնը շատ ուշ է յայտնել այդ մասին ընկերութեան:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են ապրիլի 14-ից. «Ահա տասն օրից աւելի է, որ մեզ մօտ է գտնվում հայոց դերասանական խմբի մի մասը, որի մէջ են օր. Ախաչեան, Տ. Փառանձէմ, պ.պ. Աբէլեան, Արաքսեան: Արդէն երկու ներկայացում տուել են՝ «Կրեչինսկու հարսանիք» և «Բաղդասար Աղբար»: Բայց թէ որպիսի դատապարտելի անտարբերութեամբ է վերաբերվում դէպի այս ներկայացումները Երևանի հասարակութիւնը, դրա ապացոյցն այն է, որ երկու անգամին էլ թատրոնը կիսով չափ անգամ լի չէր: Մինչդեռ Երևանը ունի մեծ ինտելիգենցիա. թէ այդ ինտելիգենցիան և թէ հասարակութիւնը առհասարակ այնքան էլ աղքատ չեն, որ չը կարողանան թատրոն յաճախել մի քանի ներկայացումներ տեսնելու: Խումբը աջողութեամբ է խաղում»:

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանց պատրաստվում է այս օրերս գնալ Անդրկասպեան երկիրը՝ իր թեմի այդ մասի այցելութեան: Այնտեղից վերադառնալուց յետոյ՝ մտադիր է այցելել հիւսիսային Կովկասը:»

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են. «Ապրիլի 12-ին «Ս. Կիւրակէ» անունով ուխտատեղու տօնն էր. ահագին բազմութիւն էր ժողովված: Արդիւնքները յատկացրված են մեր գիւղի եկեղեցուն, որը պահպանում է ներկայումս բաց եկեղեցական ծիսական դպրոց: Ապրիլի 13-ին եկաւ դպրոցների տեսուչ Ակիմով: Ցոյս կայ, որ ուսումնարանը դարձնի գիւղատնտեսական և բացվի արհեստանոց»:

—

ՂԱԶԼ-ԱՐՎԱՏԻՑ մեզ գրում են. «Զատկին առանց քահանայի չը մնացինք. ինչպէս մենք անքահանայ ժողովուրդ ենք, ճակատագիրն էլ մեզ ուղարկեց մի անծուխ քահանայ, որ մինչև անգամ քարոզ էլ խօսեց: Ինչպէս սովորութիւն է, այս տարի էլ մատաղ բաժանվեց մեր եկեղեցու բակում: Մատաղի համար հաւաքած փողից մի ինչ որ չնչին գումար է մնացել, մօտաւորապէս 30 ռուբլի: Այդ փողը չեն իմանում թէ ինչին յատկացնեն: Կիսամերկ, հիւանդ, սոված, թշուառ հալածականներին չէք տեսնում արդեօք, որոնք ամեն օր լաց ու արցունք թափելով ձեզ են դիմում մի կտոր չոր հաց միայն գոչելով: Թող ձեզ օրհնակ լինի այն տիկինը, որը իր շրջանում հաւաքեց 20 ռուբլի և բաժանեց թշուառներին, որոնց դուք ձեր բաղից դուրս էք քշում»:

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են. «Հացի սաստիկ պակասութիւն է, նոյն իսկ քաղցածներ կան, որոնց օգնութիւն է հարկաւոր դրսից: Շնորհակալութիւն տիկին Քեանդարեանցին, որը աղքատների համար հանդերձեղէն էր ուղարկել»:

—

ՂԱԶԼ-ԱՐՎԱՏԻՑ մեզ գրում են. «Տեղիս երիտասարդներից մի խումբ սիրողներ պատրաստվում են ներկայացնել «Կրռթ-կրռթ» և «Սուտ ձգնաւոր» վոդեվիլները բարեգործական նպատակով: Ցանկանում ենք աջողութիւն:»

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Գարնանացանը վերջանալու վրա է. եղանակները անձրևային են: Ցորենի թաղարը ծախվում է 12 ռուբլով: Գիւղի աղքատների համար քահանաները 30 ռուբլի հաւաքեցին և բաժանեցին զատկական տօներին»:

—

ՓՕԹԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 7-ին այստեղի հայոց եկեղեցու գաւթում մի շատ ցաւալի դէպք պատահեց: Պատարագից յետոյ, պատարագիչ քահանան վէճի բռնվեց մի քանի ծխականների հետ և վիճաբանութեան ժամանակ յարձակվեց նրանցից մէկի վրա, կոկորդը ճանկրտեց և կամենում էր աւելի առաջ գնալ, բայց ներկայ եղողները միջամտելով, ազատեցին ծըխականին կատաղած քահանայի ձեռքից: Այս խայտառակ դէպքը մեծ յուզմունք է առաջ բերել ժողովրդի մէջ: Այստեղի ժողովուրդը երկար կռիւներ է մղել իր անարժան հովիւների դէմ, շատ քահանաներ է փոխել, բայց մինչև այժմ չէ կարողացել գտնել մէկը, որ փոքր ի շատէ համապատասխան լինէր իր կոչմանը: Վերջին ժամանակներս, յոգնելով այդ անվերջ կռիւներից և աղմուկներից, զզված եկեղեցու անարժան պաշտօնեաների վարմունքներից, նա սառել է եկեղեցուց: Այսպէս, օրինակ, այստեղ կան մօտ 200 հայաստանցի հայ մշակներ, որոնք ի բնէ շատ աղօթասէր մարդիկ են. առաջները նրանցով ամեն կիրակի լի էր լինում եկեղեցին, իսկ այժմ միայն մեծ տօներին գալիս են 10—15 հոգի, իսկ կիրակի օրերը և ոչ մէկին չէք տեսնի: Մենք տեսել ենք մշակներ, որոնք աղի արցունքներ թափելով պատմում էին, որ չեն կարողանում յաճախել եկեղեցին, որովհետև տեսնելով տեղի ունեցող անկարգութիւնները, սրտերը աւելի են պղտորվում: Զարմանալի բան. ամենքս զզուանքով ենք խօսում մեր մէջ բուն դրած չարիքի մասին, բայց էլի չարիքը արմատախիլ չէ լինում....»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Լայպցիգ, ապրիլի 7-ին

Գերմանիայի համակրելի ուղղութեան հեռու լրագիրների կարգին պատկանում է նաև Բերլինի՝ օրը երկու անգամ հրատարակվող «Volks Zeitung»: Այդ լրագիրը մէկն է այն լրագիրներից, որոնք աշխատում են մատաղ սերունդը ազատել կղերական ազդեցութիւնից: Նորերս պատահած երկու դէպքի առիթով նա հրատարակեց մի յօդուած «Հաւատ և Գիտութիւն» վերնագրով, որը առաջ ենք բերում, կարծելով որ նա «Մշակի» ընթերցողներին կը հետաքրքրի:

«Բերլինի մի կրթական հիմնարկութեան մէջ, որտեղ, յիրաւի, շատ յարգելի և նշանաւոր ման-

կավարժներ են պատրաստվում, կարճ միջոցում տեղի ունեցան երկու դէպքեր, որոնք արժանի են յիշատակելու: Հիմնարկութեան ղեկավարը, որը թէ գիտնական և թէ իր կոչումով ոգևորված մանկավարժ է, աշակերտուհիների առաջ մի դասախօսութիւն է կարդում լեզուի զարգացման մասին: Նա ցոյց է տալիս, որ մանուկի լեզուն զարգացման նոյն աստիճաններն է անցնում, ինչ աստիճաններ տեղի են ունեցել ամբողջ մարդկութեան լեզուի զարգացման մէջ: Ինչպէս երեխայի սկզբնական արտայայտութիւնները կիսահասկանալի թոթովումներ են ներկայացնում, ինչպէս հետզհետէ խօսքերի և ապա սրանցից նախադասութիւնների կազմութիւնն է տեղի ունենում, միևնոյնն էլ պատահել է մարդկային ցեղի հետ, որը իր մանկութեան շրջանում ամենևին չէր տիրապետում այն բանին, ինչին որ մենք այսօր տիրապետում ենք: Այդ միջոցին աշակերտուհիներից մէկը բարձրանում է տեղից և վրդովված ձայնով բացականչում. «Մի՞թէ այդ հնարաւոր է. չէ՞ որ այն մարդիկ, որոնք Աստուծու հետ անձնական յարաբերութեան մէջ էին, աւելի կատարեալ էին քան յետագաները. չէ՞ որ նրանք անարատ էին այնպէս, ինչպէս Աստուած նրանց ստեղծել էր»: Ի՞նչ պատասխանեց բարձր կրթութիւն և գիտութիւն ձեռք բերած մարդը՝ մի հաւատացող հոգու առարկութեան: Որքան մենք գիտենք— ոչինչ, որ կարողանար արդարացնել գիտութեան եզրակացութիւնները լեզուի ուսումնասիրութեան մէջ: Փորձված մանկավարժը պարզապէս չուզեց ջահել օրիորդին համոզմունքի կռուի մէջ գցել, չուզեց դպրոցի վարչութեան հետ ընդհարում ունենալ, որը նա, որպէս ստորադրեալ պաշտօնեայ, ի նկատի ունէր»:

«Մի և նոյն հիմնարկութեան մէջ բնական գիտութեան ուսուցիչը, որը նոյնպէս սկսնակ չէ, այլ ընդհակառակը դպրոցական ծառայութեան մէջ մազերը սպիտակած և փորձված ուսուցիչ, քարածուխի մասին խօսելիս յիշում է երկրի հնութեան մասին, որը, ինչպէս յայտնի է անդրդվելի փաստերով, միլիօն տարիներ է հաշւում: Սակայն երբ ասում է, թէ չը պէտք է կարծել հինգ կամ վեց հազար տարիներ, ինչպէս հաշւում է Հին-կտակարանը, ապագայում սերունդ կրթողներից մէկը ուզում է բողոքել, բայց հոգեկան վրդովմունքը այնքան բուռն է լինում, որ խեղճի արտասուքները թափվում են աչքերից: Թէև ուսուցիչը հարցից չեղվեց, թէև ընկերուհիները սկսեցին սփոփել,— բայց այդ բոլորն անզօր են լինում նրան հանգստացնելու: Մինչև դասի վերջանալը մատաղ օրիորդը չը կարողացաւ ոչինչ ըմբռնել և հոգոց էր հանում անդադար, որովհետև նա իր պարզամիտ և երեխայական հաւատի մէջ խախտվել էր և իր ուղղափառ կրթութեան ազդեցութեան շնորհիւ՝ անզօր էր զգում իրան՝ գիտութեան վրա բացարձակ և պարզ կերպով նայելու: Ապագայում, երբ ջահել օրիորդը կը վարժվի գիտութեան պայծառ լոյսին նայել, երբ միւս անգամ նրա երեխայական տառահաւատութիւնը, գիտութեան եզրակացութիւնների շնորհիւ, ջարդ ու փշուր կը լինի, նրա արտասուքները այլ ևս չեն հոսի: Ընդհակառակն, նա կը գտնի կատարեալ սփոփանք և կենդանի բաւականութիւն գիտութեան ձեռք բերած ճշմարտութիւնների վայելչութեան մէջ, ճշմարտութիւններ, որոնց աշխարհի վրա ոչ ոք չէ կարող վէճի ենթարկել և մերժել»:

«Մենք պատմում ենք այս դէպքերը անպաճոյճ և պարզ, առանց նկատողութեան, թէպէտ մանկավարժական և բարոյական տեսակէտից կարելի էր շատ և շատ բան ասել: Առժամանակ թողնում ենք, որ փաստերը իրանք իրանց համար խօսեն: Եւ նրանք խօսում են հատորներով: Նրանք կոյր հաւատի և գիտութեան մէջ գտնվող տարաձայնութեան վրա, որին ենթարկված է մեր ամբողջ դպրոցական աշխարհը, գցում են մի այնպիսի զօրեղ լոյս, որ յանուն գիտութեան և յանուն ճշմարտութեան, բարձր ձայնով պէտք է հարցնել. Մինչև երբ գերմանական երկրներում, տառահաւատութեան դէմ պատերազմ մղելու համար՝ գիտութեան առաջ խոչընդոտներ պիտի դուրս գան»:

Ս. Սարուխանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Times» լրագրին հեռագրում են Բեռլինից, որ ռուսաց կառավարութեան կարգադրութեամբ, եօթ հարիւր քսակ ալիւր բաժանվեց Բէռինգօյի քրիստոնեայ և մահմէտական բնակիչներին: Ռուսաց ծովապետը, դիմելով քրիստոնեաներին, յորդորեց նրանց պահպանել խաղաղութիւն և համբերել, խոստանալով նրանց, որ բոլոր դժուարութիւնները շուտով կը լուծվեն նպաստաւոր կերպով: Ռուսաց զինուորների վրա հրացան արձակող մահմէտականներին ծովապետը յայտնեց, որ նա կարող էր գնդակահար անել տալ նրանց, բայց շնորհում է նրանց ազատութիւն ի նշան Ռուսաստանի ողորմածութեան: Ալիւրը բաշխելուց յետոյ, ծովապետը ճաշ տուեց մօտ հազար քրիստոնեաների:

—Աթէնքից հասած տեղեկութիւններից երևում է, որ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան համաձայնվել են 30 միլիօնի մի փոխառութիւն երաշխաւորել, որպէս զի այդ գումարով Կրետէում ինքնավարական կառավարութիւն մտցնվի, իսկ ռուսաց կառավարութիւնը ցանկութիւն է յայտնել իր հաշւով դպրոցներ և հիւանդանոցներ կառուցանել Կանէյում, Ռէթիմնօյում և կղզու ուրիշ տեղերում: Այդ դպրոցների և հիւանդանոցների շինութիւնը կը սկսվի յունիսից:

—Բրիտանական պարլամէնտը, Բալֆուրի պահանջով, յետաձգեց մինչև ապրիլի 17-ը՝ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ վիճաբանութիւնները, ի նկատի ունենալով, որ լորդ Սօլսբիւրի և Կէրզօն հիւանդ են:

—«Polit. Corresp.» լրագիրը, Պետերբուրգից ստացած իր տեղեկութիւնների հիման վրա, հաստատում է այն լուրը, որ պարսկահպատակ խմուղները յարձակվել են ռուսահպատակ թիւրքմէնների վրա: Շահն իր խորին ցաւակցութիւն է յայտնել ռուսաց դեսպանին և խոստացել պատժել աւազակ խմուղներին:

—Իտալական կառավարութիւնը լուր է ստացել, ինչպէս պատմում է «Times» լրագիրը, որ այս տարվայ ընթացքում Հռոմի անգլիական դեսպան սըր Կլէր Ֆօրդի տեղ դեսպան կը նշանակվի սըր Ֆիլիպ Կէրրի: Յայտնի չէ դեռ, թէ վերջինիս տեղ ով կը նշանակվի դեսպան Կ. Պոլսում:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՕ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՒԱՆՆԱ, 15 ապրիլի: «Posten» ականաւորը մօտեցաւ ափին: Հրամանատարը և մի քանի մարդիկ ափ իջան և թանգագին տեղեկութիւններ բերեցին:

ՄԱԴՐԻԴ, 15 ապրիլի: Կիվէստի և Կուբայի մէջ ծովային հեռագրաթելը չէ կտրված:

ՄԱԴՐԻԴ, 15 ապրիլի: Մարշալ Բլանկօ Հաւաննայից հեռագրով հաղորդում է. «Երէկ, իրիկնադէմին, ամերիկական նաւատորմի զօրաբաժինը մօտեցաւ Մարիօնաօին: Սպանիական պատերազմական նաւը թնդանօթաձգութեամբ յաղթեց ամերիկական ականաւորներին, որոնք աշխատում էին մօտենալ Կարդէնաս նաւահանգստին: Ամերիկական ականաւորները ստիպված էին յետ քաշվել:»

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 16 ապրիլի: Արտաքին գործերի մինիստր նշանակվեց Դէյ:

Մակ-Կինլէյ ենթադրում է, որ պաշարումով կարելի է այնպիսի սով առաջացնել Կուբայում, որ սպանիացիները ստիպված կը լինեն անձնատուր լինել՝ առանց կռւի: Իսկ եթէ այդպիսի բան պատահի, այն ժամանակ, ինչպէս նա սպասում է, եւրոպական պետութիւնները, Անգլիայի առաջնորդութեամբ, կը ստիպեն Սպանիային՝ Կուբան կորած համարել և հրաժարվել պատերազմը շարունակելուց:

Վաշինգտօնում ուժեղանում է այն կարծիքը, թէ գործը իսկական պատերազմին չի հասնի, որովհետև սպանիական նաւատորմը մնում է ովկիանոսի այն կողմը:

ՄԱԴՐԻԴ, 16 ապրիլի: Պաշտօնական հեռագիրը Մանիլլայից հաղորդում է, որ նաւահանգիստ մտաւ ամէրիկական նաւը, որ ընկած էր սպանիական մի նաւի ձեռքը: Ամէրիկական նաւի վրա կար 1640 տոնն ածուխ:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 16 ապրիլի: Ամէրիկական լէյտենանտը իջաւ Կուբայի ափը՝ Սէնտի-Եագօի մօտ և գնաց ապստամբների բանակը՝ Գարցիօի մօտ՝ պայմանաւորվելու ամէրիկացիների կղզին ներխուժելու մանրամասների վերաբերմամբ՝ աջակցութեամբ ապստամբների:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 16 ապրիլի: Կի-Վէստից հաղորդում են, որ բռնվեց սպանիական մի նաւ, որի վրա կային 900 զինուորներ:

ՄԱԴՐԻԴ, 16 ապրիլի: Մանիլլի ծովային ոյժերի հրամանատարը հեռագրեց, թէ դուրս եկաւ ծովը նաւատորմով, որպէս զի դիրք բռնի և սպասի թշնամուն:

Այն լուրը, թէ սպանիական նաւը ընկաւ ամէրիկացիների ձեռքը, չը հաստատվեց:

—

ՎԻԷՆՆԱ, 15 ապրիլի: Պատգամաւորների ժողովը, 175 ձայների մեծամասնութեամբ 167-ի դէմ, ընդունեց մի առաջարկութիւն, որով կոմս Բադէնիին մեղադրելու նախագիծը պէտք է յանձնվի 34 անդամներից բաղկացած յանձնաժողովին: Զայրատութեան հետևանքը հաւանութեան բուռն բացականչութիւններով ընդունվեց ձախակողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլի: Ապրիլի 15-ին Նանսէն ներկայացաւ Թագաւոր Կայսրին:

Ապրիլի 15-ին, երեկոյեան $8^1/_2$ ժամին, ազնուականների ժողովարանում, ներկայութեամբ Մեծ Իշխանների և Իշխանուհիների, դիպլոմատիական մարմնի, մինիստրների, շատ բարձրաստիճան անձանց և հասարակութեան, հրապարակապէս պատիւներ տրվեցին Նանսէնին: Աշխարհագրական ընկերութեան փոխ-նախագահ Սեմէնօվ ողջունեց Նանսէնին մի ճառով և յանձնեց ընկերութեան կողմից մեծ ոսկեայ մէդալ: Շնորհակալութիւն յայտնելով՝ Նանսէն նկարագրեց իր ճանապարհորդութիւնը: Վերջում նա մատնանիշ արեց այն ծառայութեան վրա, որ ռուս գիտնականները մատուցել են բևեռային երկիրները ուսումնասիրելու գործին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱԻՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին նեարդային հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—$10^1/_2$—$11^1/_2$ ժ.: կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—$11^1/_2$—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—$1^1/_2$—$2^1/_2$ ժ. ներքին, և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒԴԻՆԵԱՆ 5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—$6^1/_2$—7 ժ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
104—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Տնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՅԾԱԿ»: Մի քանի րօպէում նորոգում է հին, անշնորհ, խախտված կահկարասիքը, պիանինօ, րօյալներ, հայելի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը: ԳԻՆԸ՝ 1 ր.:
ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից (մօզօլներ), ելունդներից և կաշուէ այլ ուռոյցքներից: «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:
Ծախվում է դեղարարական խանութներում:
Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների Կովկաս ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:
43—50 (№ 76)

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, ապրիլի 17-ին, Մօսկվայի Կօրշի թատրօնի ռուսաց դրամատիկական խմբի արտիստները, Ֆ. Ա. Կօրշի անձնական կառավարութեամբ, կը ներկայացնեն առաջին անգամ
I
ПРАВА МУЖА
Կոմ. 3 գործ. հեղ. Էրվիէի:
II
Мнимый больной
Կոմ. 3 գործ. Մօլիէրի:
Մասնակցում են՝ տ. տ. Ազօգարօվա, Կօշևա, Միրօնօվա, Օմուտօվա, Մուզիլ-Բօրօզդինա, Կօլօսօվա, պ.պ. Զարսկի, Տուգանօվ, Կօնստանտինօվ, Տրուբէցկօյ, Սմօլիակօվ, Վեազօվսկի, Խ…րինով, Սվերչկօվ և այլն:
ԱՆՕՆՍ. Վաղը, «Два подростка», պիես 5 գործ. և 7 պատկ. Պիէր դէ-Կուրսէլի, թարգմ. Ֆ. Ա. Կօրշի:
Կիրակի, երկու ներկայացում՝ առաւօտեան պակասեցրած գներով «Лѣсъ», կոմ. 5 գործ. Օստրօվսկու: Երեկոյեան «Madame sans gêne».
Սկիզբը 8 ժամին:
1—1

Վերին-Ազգան գիւղի եկեղեցական ծխական դպրոցի վարչութիւնը խնդրում է յարգելի հեղինակներին և թարգմանիչներին, այլ և ժողովրդական գրքեր տարածելու մտքին համակրողներին՝ նուիրել իրանց աշխատասիրութիւններից և ժողովրդական, տնտեսական գրքերից դպրոցի գրադարանին, ուր գրքերի թիւը մի տարվայ մէջ հասել է 500-ի: Այդ գրքերից թէ գիւղացիները և թէ դպրոցի աշակերտները միշտ օգտվում են: 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՋՕՆ ՍՏԻՒԱՐՏ ՄԻԼԼԻ
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Գրքի հայերէն թարգմանութիւնը՝ հեղինակի համառօտ կենսագրութեամբ: Գինը 1 րուբլի 20 կոպէկ, ճանապարհածախսով:
Մամուլի տակ է Ս. Տէր-Աւետիքեանի «ԻՐԼԱՆԴԻԱՅԻ ԴԱՏԸ». գինը 80 կոպէկ, ճանապարհածախսով:
Դիմել՝ Москва, Сухаревевская площадь, д. № 306, Л. Д. Саргсянцу. 1—5



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՅԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու, կակղացնելու և սնացնելու համար: Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:
ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, շինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չուխլէյների, սանձերի, ձիու սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:
ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց շինած թամբերի համար): Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և գունաւոր գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:
Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում:
Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:
(№ 76) 43—50

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ընդհանուրի գիտութեանը, որ Թիֆլիսում, համաձայն Կովկասի պ. կառավարչապետի հաստատած կանոնադրութեան՝ ձիաների տօնավաճառների մասին, ներկայ մայիսի 5-ից բացվում է ՁԻԱՆԵՐԻ ՏՕՆԱՎԱՃԱՌ, որը կը շարունակվի մինչև մայիսի 18-ը: Վերոյիշեալ ձիաների նավաճառի համար տեղ է յատկացրված Դիդուբէյում, Կովկասեան ձիաբուծութիւնը խրախուսող ընկերութեան հիպօդրոմում: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նրա առեւտրում, ներկայ ապրիլի 22-ին, ցերեկվայ 1 ժամին, նշանակված է ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ, կապալով տալու քաղաքային տան նկուղները և խանութները, Երևանեան հրապարակի վրա:
Մանրամասն պայմանագիրը կարելի է տեսնել Ուպրավայի մէջ, ամեն օր, բացի տօն օրերից, ցերեկվայ 12—2 ժամը: 3—3